Լուսին

Լուսինն ունի կարոտ
Ու անսահման թախիծ,
Իր մեջ ունի խորհուրդ
Ու գաղտնիքներ անթիվ։
Այսօր լուսնի մի շող
Ծնեց վերհուշ փոքրիկ,
Ու թրթռաց հոգիս
Դողդողացող հուշից։

Այսօր քո իսկ ձեռքով
Ու իմ հոգու խորքից,
Յոթ գույն ծիածանի
Երկինք ուղարկվեցին։
Իմ մեջ մնաց միայն
Լուսին ու մի գաղտնիք,
Ինչ-որ տխուր կարոտ,
Ինչ-որ դեղին թախիծ։

Լուսինն ունի կարոտ
Ու անսահման թախիծ,
Իր մեջ ունի խորհուրդ
Ու գաղտնիքներ անթիվ։
Ների՛ր ինձ Տեր աստված,
Որ լուսնի վրայից
Ինչ-որ թախիծ իջավ
Ու պարուրեց հոգիս։